

ԹԵՄԱ 9.

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ

Բովանդակություն

«Բյուջե» հասկացությունը, դրա նպատակները և տեսակները.....	2
«Բյուջե» հասկացությունը	2
Բյուջեի նպատակները	2
Բյուջեի տեսակները.....	4
Համայնքի բյուջեի ձևավորման սկզբունքներն ու կառուցվածքը	6
Համայնքի բյուջեի մուտքերի կառուցվածքն՝ ըստ վարչական և ֆոնդային մասերի	7
Համայնքի բյուջեի ելքերի կառուցվածքն՝ ըստ վարչական և ֆոնդային մասերի	9
Համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպումը.....	11
Համայնքի բյուջեի կազմումը, քննարկումը և հաստատումը.....	12
Համայնքի բյուջեի կատարումը և վերահսկումը.....	15
Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմումը և հաստատումը	16
Պետական և համայնքային բյուջեների փոխհարաբերությունները	17
Ֆինանսական համահարթեցման դոտացիաներ և այլ դոտացիաներ.....	18
Սուբվենցիաներ	20
Բյուջետային վարկեր և փոխատվություններ	23
Բյուջետային երաշխիքներ և պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման համար տրվող միջոցներ.....	25
Գրականություն	27

«Բյուջե» հասկացությունը, դրա նպատակները և տեսակները

«Բյուջե» հասկացությունը

Բյուջեն պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ-երին) Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիր է¹:

Եթե այլ ձևով սահմանելու լինենք, ապա բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծախսերի համապարփակ թվարկումն է՝ տվյալ բյուջետային տարվա ընթացքում կառավարման մարմինների յուրաքանչյուր գործառույթի գծով: Ընդհանուր առմամբ, բյուջեն պոտենցիալ սպառողների միջև սահմանափակ միջոցների համապարփակ և հետևողական բաշխումն է: Որպես այդպիսին՝ բյուջեն ՏԻՄ-երի ֆինանսական կառավարման առանցքն է:²

Ելնելով այն բանից, որ համայնքի ֆինանսական միջոցները խիստ սահմանափակ են՝ դրանց բաշխումը պետք է իրականացվի բացառապես ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների սահմաններում: Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը³: Այսինքն, բյուջեն ցանկացած համայնքի ֆինանսական ամենահիմնական փաստաթուղթն է, որտեղ ներկայացված են համայնքի քաղաքականությունը, տարեկան գործունեության պլանավորումը և հսկողությունը: Այն ներառում է տվյալ տարվա համար պլանավորվող ծրագրերը, միջոցառումները, եկամուտների կանխատեսումները և այն ծախսերի նախահաշիվները, որոնք անհրաժեշտ են պլանավորվող ծրագրերն ու միջոցառումները ֆինանսավորելու համար:

Բյուջեի նպատակները

Նպատակները, որոնց կարող է ծառայել համայնքի բյուջեն, պետք է ուղղորդված լինեն ՏԻՄ-երին օրենքով սահմանված տարաբնույթ լիազորությունների կատարմանը: Ստորև ամփոփ ներկայացվում են մի շարք նպատակներ, որոնց կարող է ծառայել համայնքի բյուջեն⁴:

¹ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 2

² «Համայնքի ֆինանսական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Վ. Շահբազյանի խմբ., Գորիսի երիտասարդական միություն ՀԿ, Երևան 2009թ.

³ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 83, մաս 1

⁴ «Համայնքի բյուջետավարման ուղեցույց», ԱՄՆ ՄՁԳ Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլ, Երևան 2010թ.

Որպես պայմանագիր

Համայնքի ղեկավարը և ավագանին խոստանում են միջոցներ տրամադրել համայնքային ստորաբաժանումներին՝ համաձայնեցված ուղղություններով ծախսելու համար: Այս առումով բյուջեն մի պայմանագիր է, որը կնքվում է համայնքի ներկայացուցչական և գործադիր մարմինների միջև: Բյուջեն կարող է դիտվել նաև որպես համայնքի բնակչության և իշխանությունների միջև կնքվող պայմանագիր: Այս իմաստով բնակչությունը համաձայնվում է վճարել հարկեր, տուրքեր և վճարներ՝ համայնքի իշխանություններից որոշակի ծառայություններ ստանալու համար:

Որպես քաղաքականություն մշակելու կարևոր գործիք

Բյուջեով սահմանվում է համայնքի տարեկան կառավարման քաղաքականությունը: ՏԻՄ-երը պետք է պատասխանեն այն հարցին, թե արդյոք իրենց կողմից սահմանված քաղաքականությունը համայնքի բյուջետային գործընթացն իրագործելու լավագույն տարբերակն է:

Բյուջեն իրենից ներկայացնում է համայնքային տարեկան քաղաքականություն մշակելու կարևոր գործիք: Թե ինչպես է համայնքը որոշում ծախսել իր սուղ միջոցները, հավանաբար, ամենակարևոր քաղաքական որոշումն է, որը համայնքն ընդունում է բյուջետային տարվա ընթացքում: ՏԻՄ-երի տնօրինած բյուջետային միջոցները միշտ էլ պակաս են այն ծավալից, որն անհրաժեշտ է համայնքի բոլոր խնդիրները լուծելու համար: Վերջիններս մրցակցող այլընտրանքներ են: ՏԻՄ-երի խնդիրն է՝ կատարել այնպիսի ընտրություն, որն առավելագույնս կձառայի համայնքային խնդիրների համամասնական լուծմանը:

Որպես կառավարման միջոց

Բյուջեն որոշումների և պարտավորությունների մասին մի հայտարարություն է՝ իրականացվելիք առանձին ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ: Որպես կառավարման միջոց՝ լավ պլանավորված բյուջեն կարող է օգնել ՏԻՄ-երին՝ սահմանելու և գնահատելու համայնքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության աստիճանը: Այն բարձրացնում է կառավարման գծով պատասխանատվությունը և հաշվետու լինելու աստիճանը:

Որպես պլան

Բյուջեն համայնքի տարեկան աշխատանքային պլանն է, որտեղ այլընտրանքները սահմանվում են այնպես, որ դրված նպատակները իրականանալի դառնան: Բյուջեն նաև գործադիրի և օրենսդիրի գործունեության համապատասխանեցման միջոց է: Այն պետք է բովանդակի մանրամասն բացատրություն, թե ինչ նպատակներ կիրականացվեն առաջարկվող ծախսերը կատարելու դեպքում: Պլանավորման ուղղվածությունը կարող է ի հայտ բերել դրված նպատակների իրականացման այլընտրանքային մեթոդներ:

Որպես խթան

Նպատակները, խնդիրները և արդյունքները սահմանելիս՝ բյուջեն կարող է օգտագործվել որպես գործադիրին խթանելու միջոց՝ ներգրավվածություն ու նվիրվածություն ապահովելու մեխանիզմների կիրառմամբ: Բյուջեն նվաճումները և առաջադրված նպատակները համադրելու, ինչպես նաև սահմանված ու փաստացի ստացված արդյունքները համեմատելու լավ միջոց է: Ինչ վերաբերում է գործադիրին, ապա այն առավել արդյունավետ կգործի, եթե հստակ պատկերացնի վերջնանպատակը և դրան հասնելու եղանակները:

Որպես ֆինանսական հսկողության կառուցակարգ

Որպես ֆինանսական հսկողության կառուցակարգ՝ բյուջեն կարող է դիտվել որպես միջոց, որով սահմանվում է կոնկրետ կատարողի պատասխանատվության չափը: Բյուջեն ապահովում է գործադիր մարմնի կատարած ծախսերի նկատմամբ գործուն հսկողություն և վերահսկողություն:

Որպես հաղորդակցման կառուցակարգ

Բյուջեն հնարավորություն է տալիս քաղաքացիներին, համայնքային իշխանություններին, քաղաքականություն մշակողներին, պոտենցիալ ներդրողներին և շահագրգիռ այլ անձանց պարզորոշ ըմբռնել համայնքի հիմնախնդիրները, միտումները և լուծման այլընտրանքները, որոնք ներկայացված են բյուջեում: Այդ փաստաթուղթը պետք է ընթերցողին անհրաժեշտ տեղեկատվություն տա: Հարկ եղած դեպքում բերվում են գծապատկերներ և գրաֆիկներ, որոնք ավելի մատչելի են դարձնում ֆինանսական և վիճակագրական տվյալները:

Որպես ժողովրդավարության գործիք

Ի սկզբանե բյուջետային գործընթացի կարևորագույն նպատակներից մեկը ժողովրդավարության հաստատման և ամրապնդման գործիք լինելն է: Հանրությունը պետք է արտահայտի իր տեսակետը, իսկ կառավարման մարմինները բաց լինեն հանրության կողմից քննադատության համար: Սա համայնքի ֆինանսական միջոցների նկատմամբ հանրային հսկողություն իրականացնելու լավ միջոց է:

Բյուջեի տեսակները

Համայնքի բյուջետավարման գործում կարևոր նշանակություն ունի բյուջեի տեսակի ընտրությունը, որով էլ պայմանավորված է համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման բովանդակությունը: Բյուջեի հիմնական տեսակները երեքն են՝

- ✓ ըստ ծախսատեսակների (ծախսային կամ հողվածային),
- ✓ ծրագրային,

✓ ըստ աշխատանքների կատարման արդյունքների:

Բյուջեի յուրաքանչյուր տեսակ ունի իր առավելություններն ու թերությունները: ՏԻՄ-երի կողմից օգտագործվող բյուջեների տեսակների ընտրությունը մեծ չափով պայմանավորված է ինչպես ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված լինելու հանգամանքով, այնպես էլ այն ռեսուրսային հնարավորություններով և մասնագիտական ունակություններով, որոնք առկա են տվյալ համայնքում:

Ծախսային բյուջեն ըստ ծախսատեսակների դասակարգված ֆինանսական փաստաթուղթ է, որը սահմանում է, թե ինչ գումարներ կծախսվեն յուրաքանչյուր ծախսային հոդվածի գծով: Այս տեսակի բյուջեներում հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է այն բանի վրա, թե ի՞նչ է գնվելու, կամ թե ինչքա՞ն է ծախսվելու, ինչի՞ համար: Ծախսերը դասակարգվում են ըստ խմբերի, ինչպիսիք են՝ աշխատավարձը, սուբսիդիաները, դրամաշնորհները, ձեռքբերվող ապրանքները, աշխատանքներն ու ծառայությունները և այլն: Չնայած մշակման պարզությանը՝ ծախսային բյուջեն ոչ մի տեղեկատվություն չի պարունակում որևէ ծրագրի, ակնկալվող արդյունքների, համայնքային ծառայությունների և ծախսողների վերաբերյալ:⁵

Ծրագրային բյուջեն համայնքի ոլորտային նպատակների, վերջնական արդյունքների, ծրագրերի և միջոցառումների սահմանման և պարբերաբար դրանց գնահատման ֆինանսական ծրագիրն է, որը կապ է հաստատում համայնքի ծրագրերի և միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ակնկալվող արդյունքների միջև: Ծրագրային բյուջեն ցույց է տալիս, թե ինչ արդյունքներ ձեռք կբերվեն տվյալ տարում բյուջետային ծրագրերն իրականացնելիս՝ որոշակի ռեսուրսներ ներդնելու դեպքում:⁶ Այն համատեղում է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ՏԻՄ-երի կողմից իրականացվող բյուջետային քաղաքականությունը և ակնկալվող արդյունքները: Բյուջեն հաստատում է աշխատանք-փող կապը, որտեղ ծախսերը վերագրվում են այն բանին, թե ինչու՞ և ի՞նչ է արվելու, ո՞վ է դա անելու, ի՞նչ է ստացվելու կամ ձեռքբերվելու և ինչպե՞ս է դա արվելու:

Վերջին տարիներին ՀՀ-ում ՏԿԶԼ-ի, GIZ-ի և ՀՖՄ-ի համատեղ ջանքերով ստեղծվել է համայնքի ծրագրային բյուջեի մշակման մեթոդաբանական ամբողջական բազան և այն փորձարկվել է շուրջ 50 (այդ թվում՝ 20 մեծ միաբնակավայր և 30 բազմաբնակավայր) համայնքներում:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն համայնքի առաքելության, նպատակների ու խնդիրների սահմանման և, որպես բյուջետային գործընթացի մաս, պարբերաբար դրանց արդյունքների գնահատման ֆինանսական

⁵ «Համայնքի բյուջետավարման ուղեցույց», ԱՄՆ ՄԶԳ Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլ, Երևան 2010թ.

⁶ «ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ծրագրային բյուջետավարման մեթոդաբանություն», ԳՄՀԸ, ՀՖՄ, Երևան, 2017թ.

ծրագիր է, որը կապ է հաստատում համայնքի ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներդրումների և ակնկալվող արդյունքների միջև:⁷

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն ուղղված է դեպի համայնքի գործունեության արդյունքները: Այն ցույց է տալիս, թե ի՞նչ արդյունք ձեռք կբերվի տվյալ աշխատանքը կատարելիս կամ բյուջետային ծրագիրն իրականացնելիս, և թե ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ռազմավարական ծրագրի քանակական և որակական արդյունքների ձեռքբերման համար:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն պատասխանում է հետևյալ հարցերին.

- ✓ ի՞նչ արդյունքներ ձեռք կբերվեն,
- ✓ ի՞նչ ազդեցություն կլինի համայնքի բնակչության վրա,
- ✓ ի՞նչ ազդեցություն կլինի սպառողների (շահառուների) վրա,
- ✓ որքա՞ն գումար կծախսվի տվյալ աշխատանքը կատարելու համար:

Համայնքի բյուջեի ձևավորման սկզբունքներն ու կառուցվածքը

Ըստ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի՝ համայնքի բյուջեի ձևավորման հիմնական սկզբունքներն են.

- ✓ ՀՀԶԾ-ի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը,
- ✓ պահուստային ֆոնդի ստեղծումը,
- ✓ համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը,
- ✓ խնայողականությունը,
- ✓ արդյունավետությունը,
- ✓ հավաստիությունը և հստակությունը,
- ✓ հրապարակայնությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը, ՏԻՄ-երի կողմից իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում է հետևյալ բաղկացուցիչ մասերի՝⁸


- ա) համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե).
- բ) համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե):⁹

⁷ «Տեղական ինքնակառավարման համակարգում ռոտ աշխատանքների կատարման բյուջետավարման ձեռնարկ», Միավորված ազգերի Զարգացման ծրագիր, Երևան, 2006թ.

⁸ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 28

⁹ Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցները (այդ թվում՝ ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդի միջոցները) չեն կարող փոխանցվել համայնքի բյուջեի վարչական մաս՝ բացառությամբ օրենքի 28.1-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետով սահմանված դեպքի:

Գծապարկեր 1. Համայնքի բյուջեի կառուցվածքը¹⁰



Համայնքի բյուջեի մուտքերի կառուցվածքն՝ ըստ վարչական և ֆոնդային մասերի

Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, բյուջետային մուտքերն են պետական կամ համայնքների բյուջեներ ստացվող դրամական միջոցները: Բյուջետային մուտքերը ներառում են տվյալ բյուջեին օրենքով ամրագրված բյուջետային եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, բյուջեից տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների գումարների վերադարձից, ոչ դրամային տեսքով այլ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող, ինչպես նաև ներգրավված փոխառու և այլ դրամական միջոցները:¹¹

Մուտքերի գծով համայնքի բյուջեն (վարչական և ֆոնդային մասերը) իր մեջ ներառում է (են).

- ✓ համայնքի բյուջեին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող եկամուտները,
- ✓ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցները:

¹⁰ «Համայնքի բյուջետավարման ուղեցույց», ԱՄՆ ՄԶԳ Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլ, Երևան, 2010թ.

¹¹ Համայնքի վարչական և ֆոնդային բյուջեների մուտքերն ու ելքերը առավել մանրամասն սահմանված են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28¹-րդ և 28²-րդ հոդվածներում

Համայնքների բյուջեների մուտքերի շրջանակը ընդգրկում է տարբեր հարկատեսակներ, պետական տուրքի որոշ տեսակներ, տեղական տուրքեր և վճարներ, ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից եկամուտներ, պաշտոնական դրամաշնորհներ, այլ եկամուտներ, փոխառու միջոցներ:

Համայնքների բյուջեների մուտքերը կարելի է խմբավորել ըստ տարբեր չափանիշների¹².

Ըստ ստացման հաճախականության՝

- ✓ ընթացիկ եկամուտներ,
- ✓ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքեր,
- ✓ բյուջեին միանվագ հատկացվող այլ մուտքեր:

Ընթացիկ եկամուտները մշտական, որոշակի պարբերականությամբ կատարվող բյուջետային մուտքերն են, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերը՝ միանվագ ստացվող:

Ըստ ֆինանսական ինքնուրույնության ապահովման՝

- ✓ սեփական եկամուտներ,
- ✓ պաշտոնական դրամաշնորհներ,
- ✓ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցներ:

Ըստ տեսակների՝

- ✓ հարկային եկամուտներ և տուրքեր,
- ✓ պաշտոնական դրամաշնորհներ,
- ✓ այլ եկամուտներ,
- ✓ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցներ:

Համայնքի բյուջեի վարչական մասի մուտքերի մեջ ներառվում են՝

1. հարկային եկամուտները,
2. տուրքերը (պետական և տեղական),
3. պաշտոնական դրամաշնորհները՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների, այլ դոտացիաների, ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) և այլ աղբյուրներից ստացվող դրամաշնորհների տեսքով,
4. այլ եկամուտներ՝ հողերի և գույքի վարձակալությունից, վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից վարչական

¹² «Համայնքի բյուջետավարման ուղեցույց», ԱՄՆ ՄՉԳ Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլ, Երևան, 2010թ.

- պատասխանատվության միջոցների կիրառումից, մատուցվող համայնքային ծառայությունների դիմաց գանձվող վճարներից, տեղական վճարներից և այլն,
5. դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ պետական բյուջեից և (կամ) այլ համայնքների բյուջեներից տրամադրվող բյուջետային փոխառությունները, դրանց վերադարձից ստացվող միջոցները, վարչական բյուջեի միջոցների ազատ մնացորդը և այլն:

Համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքերի մեջ ներառվում են՝

1. պաշտոնական դրամաշնորհները՝ պետական բյուջեից և այլ աղբյուրներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) տեսքով,
2. այլ եկամուտներ՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումները և այլն,
3. ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերը,
4. դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ստացված վարկերը, ՏԻՄ-երի թողարկած պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները, ֆոնդային բյուջեի միջոցների ազատ մնացորդը և այլն:

Համայնքի բյուջեում կան նաև եկամուտի տեսակներ (օրինակ՝ ՏԻՄ-երին ենթակա ձեռնարկությունների տրամադրության տակ մնացած շահույթի ազատ մնացորդը), որոնք կարող են ամրագրվել և՛ վարչական, և՛ ֆոնդային բյուջեներում՝ մասհանումային կամ ամբողջական տարբերակով:

Համայնքի բյուջեի ելքերի կառուցվածքն՝ ըստ վարչական և ֆոնդային մասերի

Համայնքի բյուջեի ծախսերը և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները դասակարգվում են ըստ.¹³

- ✓ ՏԻՄ-երի գործառնությունների,
- ✓ գերատեսչական բաշխվածության,
- ✓ ծախսերի տնտեսագիտական բովանդակության:

Համայնքի բյուջեի ծախսերի **գործառական (ֆունկցիոնալ) դասակարգումը** ՏԻՄ-երի հիմնական գործառնությունների իրականացման ֆինանսավորման ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի խմբավորումն է:

¹³ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 39

Համայնքի բյուջեի ծախսերի **տնտեսագիտական դասակարգումը** ծախսերի խմբավորումն է՝ դրանց տնտեսագիտական բովանդակությանը համապատասխան: Բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգումն ունի հետևյալ կառուցվածքը՝

- ✓ ընթացիկ ծախսեր,
- ✓ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

Համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերն են՝

- ✓ աշխատանքի վարձատրությունը,
- ✓ տոկոսավճարները,
- ✓ ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը,
- ✓ սուբսիդիաները,
- ✓ դրամաշնորհները,
- ✓ սոցիալական նպաստները և կենսաթոշակները,
- ✓ այլ ընթացիկ ծախսերը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնություններն են՝

- ✓ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը,
- ✓ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից միջոցների ստացումը:

Համայնքի բյուջեի ծախսերի **գերատեսչական դասակարգումը** ծախսերի խմբավորումն է՝ ըստ բյուջետային միջոցների անմիջական ստացողների՝ ՏԻՄ-երի գերատեսչական կառուցվածքների, օրինակ՝ կրթական, մշակութային, մարզական հաստատությունների և այլն:

Համայնքի բյուջեի վարչական մասի ելքերը

ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման **ընթացիկ ծախսերի** հիմնական ուղղություններն են.

1. ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների ծախսերը,
2. օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման ընթացիկ ծախսերը համայնքի գործունեության բոլոր ոլորտներում (բաժիններում),
3. հիմնական բաժիններին (ուղղություններին) չդասվող պահուստային ֆոնդը:

Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ելքերն են՝

- ✓ ՏԻՄ-երի կողմից իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում կատարվող կապիտալ ծախսերը,
- ✓ Ֆոնդային բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավված վարկերի և ՏԻՄ-երի թողարկած պարտատոմսերի տեղաբաշխումից միջոցների մարումները և բյուջետային փոխառվածությունների տրամադրումը,

- ✓ Ֆոնդային բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման նպատակով՝ Ֆոնդային բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների հատկացումները,
- ✓ հիմնական բաժիններին (ուղղություններին) չհասվող պահուստային ֆոնդը:

Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդերի միջոցով իրականացվում է բյուջեի վարչական և ֆոնդային մասերի հավասարակշռությունը: Մի կողմից, համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցները կարող են դառնալ ֆոնդային բյուջեի եկամուտներ, մյուս կողմից՝ (համայնքի ավագանու որոշումներով) չնախատեսված և լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման աղբյուր:

Համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպումը

Բյուջետային գործընթացը յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունները կազմելու և հաստատելու ուղղությամբ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է:

Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է ՀՀ վարչապետի կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունման օրը և ավարտվում՝ տվյալ տարվա բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու օրը: Բյուջեների նախագծերը կազմվում են ՀՀ կառավարության կամ համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան:

ՀՀ-ում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին: Բյուջետային տարվան հաջորդող տարվա առաջին ամսվա ընթացքում կառավարության որոշմամբ կարող է շարունակվել նախորդ բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումը (այսուհետ՝ եզրափակիչ շրջանառություն), եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան չի նախատեսվել:

ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետներում պետական լիազորված մարմինը (ՀՀ ֆինանսների նախարարությունը) մշակում և մարզպետարանների միջոցով ՏԻՄ-երին է տրամադրում վերջիններիս համար պարտադիր և խորհրդատվական բնույթ կրող մեթոդական ցուցումներ ու ուղեցույցներ, որոնք բյուջետային գործող օրենսդրության շրջանակներում կանոնակարգում են համայնքի տվյալ տարվա բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր տարի կոնկրետացնելով համայնքի բյուջեի կազմման հիմքում դրվող՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող և նպատակային դրամաշնորհների հաշվարկման համար անհրաժեշտ ելակետային


տվյալների ներկայացման կարգը և ժամկետները, պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման և նպատակային հատկացումներ ստանալու նպատակով ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները, բյուջետային ծախսերի նախահաշիվների ձևերը, բյուջետային միասնական ձևերը, և այլ ցուցումներ և դրույթներ:¹⁴

Համայնքի բյուջետային գործընթացը կազմակերպվում և իրականացվում է երեք հիմնական փուլերով (տե՛ս գծապատկեր 2)՝

1. բյուջեի նախագծի կազմում և հաստատում,
2. բյուջեի կատարում և վերահսկում,
3. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում:

Տվյալ տարվա բյուջետային գործընթացի ընդհանուր տևողությունը համայնքներում, որպես կանոն, գերազանցում է երկու տարին:

Գծապատկեր 2. Համայնքի բյուջեի գործընթացի կազմակերպումը¹⁵



Համայնքի բյուջեի կազմումը, քննարկումը և հաստատումը

Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է համայնքի զարգացման հնգամյա ծրագրով («ՀՀԾ-ով»)՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա: Համայնքի բյուջեի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը:

¹⁴ «Համայնքի բյուջետավարման ուղեցույց», ԱՄՆ ՄԶԳ Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլ, Երևան, 2010թ.

¹⁵ «Համայնքի բյուջետավարման ուղեցույց», ԱՄՆ ՄԶԳ Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլ, Երևան, 2010թ.

Բյուջետային գործընթացի **առաջին փուլը՝ բյուջեի նախագծի կազմում և հաստատում**, սկսվում է կանխատեսվող տարվան նախորդող տարվա կեսին և տևում է շուրջ կես տարի: Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքները կազմակերպելու նպատակով համայնքի ղեկավարը՝ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների և բյուջետային հիմնարկների ղեկավարներին՝

- ✓ տալիս է համապատասխան հրահանգներ բյուջեի մուտքերի և ելքերի հաշվարկման ու ներկայացման համար.
- ✓ պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով ՏԻՄ-երի համար պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներն ստանալու օրվանից մեկ շաբաթվա ընթացքում ապահովում է բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման համապատասխան ձևերով:

Բյուջետային հիմնարկները համայնքի ղեկավարի կողմից սահմանված ժամկետում համայնքի ղեկավարին են ներկայացնում բյուջետային ֆինանսավորման հայտերը, իրենց պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:

Համայնքի ղեկավարն ամփոփում է սահմանված ձևերով ներկայացված տվյալները և կազմում համայնքի բյուջեի նախագիծը, որը բաղկացած է երկու մասից՝ համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից:

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում: Համայնքի բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ:

Համայնքի ղեկավարը համայնքի ավագանու նիստում ներկայացնում է համայնքի բյուջեի նախագիծը, պատասխանում է ավագանու անդամների հարցերին:

Համայնքի ավագանու անդամները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են ավագանու նիստում: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները:

Համայնքի ղեկավարը քննարկումներից հետո կարող է վերցնել մինչև մեկ շաբաթ ժամանակ՝ ներկայացված նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար կամ պահանջել՝ հաստատելու բյուջեն: Նշված ժամկետում համայնքի ղեկավարը հրավիրում է համայնքի ավագանու նիստ և ներկայացնում է իր դիրքորոշումը բյուջեի՝ ավագանու առաջարկած փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը համայնքի ղեկավարի ընդունած փոփոխություններով

քվեարկության է դրվում ամբողջությամբ: Չընդունվելու դեպքում նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետները կարող է որոշել համայնքի ավագանին՝ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, կամ համայնքի ղեկավարը՝ հրավիրելով արտահերթ նիստ:

Համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին, որի վերաբերյալ ընդունում է համայնքի ղեկավարի ներկայացրած համապատասխան որոշման նախագիծը: Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո 3 օրվա ընթացքում ներկայացնում է համապատասխան մարզպետին: Մարզպետը ստուգում է համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի համապատասխանությունն օրենքին՝ պահպանելով օրենքով սահմանված բյուջեների ինքնուրույնության սկզբունքը, հաշվարկների համապատասխանությունը սահմանված մեթոդաբանությանը և բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող սկզբունքների պահպանման դեպքում համայնքի բյուջեն ներառում է պետական լիազորված մարմին ներկայացվող՝ մարզի վարչական տարածքում գտնվող համայնքների բյուջեների ամփոփ տեղեկանքում: Ամփոփ տեղեկանքի ձևը, նրա կազմման կարգը և ներկայացման ժամկետները սահմանում է պետական լիազորված մարմինը:

Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում՝ համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում իր անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած փոփոխություններով:

Համայնքի բյուջեի հաստատման առնչությամբ՝ հրաժարական տալու միջոցով համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ համայնքի ավագանու կողմից որոշում ընդունվելու դեպքում համապատասխան մարզպետը հարցը ներկայացնում է կառավարության լիազորած մարմին, որն էլ օրենքով սահմանված կարգով այն ներկայացնում է կառավարություն:

Եթե կառավարությունը դիմումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած փոփոխություններով:

Կառավարության կողմից համայնքի ղեկավարի՝ հրաժարական տալու միջոցով լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ համայնքի նոր ղեկավարը բյուջեի նախագիծ է ներկայացնում համայնքի ավագանուն քսան օրվա ընթացքում: Այն քննարկվում և հաստատվում է երեսուն օրվա ընթացքում:

Մինչև բյուջետային տարվա սկիզբը համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում՝ ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Այդ դեպքում համայնքի ղեկավարը պարտավոր է կատարել նախկինում կնքված պայմանագրերից բխող պարտավորությունները, չիրականացնել նոր ներդրումներ, իսկ

ծախսերը կատարել նախորդ տարվա յուրաքանչյուր ամսում կատարված ծախսերից ոչ ավելի:

Համայնքի բյուջեի կատարումը և վերահսկումը

Բյուջետային գործընթացի **երկրորդ փուլի՝ բյուջեի կատարում և վերահսկում**, տևողությունը կազմում է մեկ տարի, և այն համընկնում է բյուջետային տարվա ժամկետների հետ (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը):

Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը սահմանում է համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատում է բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները:

Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն համայնքի ղեկավարն է:

Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեի կատարումն ապահովելու նպատակով՝

- ✓ համայնքի ավագանու հաստատած տարեկան բյուջեն, եռամսյակային համամասնություններով և բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի տարեկան և եռամսյակային բաշխմամբ հաստատված նախահաշիվները տրամադրում է համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացնող պետական լիազորված մարմինին,
- ✓ ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը,
- ✓ կազմակերպում է համայնքի բյուջե տեղական հարկերի, տուրքերի և վճարների մուտքագրումը,
- ✓ իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին որոշմամբ սահմանված չափաքանակները:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի մուտքերը կամ ավելացնում են ելքերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության

առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով:¹⁶

Հաստատված բյուջեի եկամուտների կազմում չնախատեսված և այդ բյուջե մուտքագրված նվիրաբերված գումարները համայնքի ղեկավարն իրավասու է նույն տարում ծախսել՝ ըստ նվիրաբերողի կողմից որոշված ուղղությունների:

Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են համայնքի ավագանին, ՀՀ կառավարությունը և ՀՀ հաշվեքննիչ պալատը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

Կառավարությունը համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է պետական բյուջեից համայնքին տրված նպատակային հատկացումների (սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից օրենքի համաձայն համայնքի բյուջե մասհանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների) օգտագործման, ինչպես նաև պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների օգտագործման և դրանց մարման ծրագրի նկատմամբ՝ իր կողմից սահմանված կարգով պետական կառավարման լիազոր մարմնի միջոցով:

Համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, համայնքի սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ հաշվեքննություն է իրականացնում Հաշվեքննիչ պալատը:¹⁷

Համայնքի ղեկավարը, համայնքի աշխատակազմը, բյուջետային հիմնարկների պաշտոնատար անձինք համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնող անձանց պարտականությունների կատարումը խոչընդոտելու, կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով¹⁸:

Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմումը և հաստատումը

Բյուջետային գործընթացի **երրորդ փուլը՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում**, սկսվում է բյուջետային տարվա ավարտին

¹⁶ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 33

¹⁷ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 95, կետ 7

¹⁸ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 34

հաջորդող օրվանից: Ըստ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացնում է ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը, իսկ ավագանին, աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության աուդիտայամբ, քննարկում և հաստատում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 20-ը:

Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը դնում է հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին, համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

Եթե համայնքի ավագանին, այնուամենայնիվ, իր որոշմամբ ընդունում է համայնքի ղեկավարի հրաժարականը, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը նույնպես համարվում է հաստատված:


Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ավագանու հաստատելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է համապատասխան մարզպետին:

Պետական և համայնքային բյուջեների փոխհարաբերությունները

Ընդհանուր առմամբ, պետական և համայնքային բյուջեները կարող են ունենալ փոխհարաբերությունների հետևյալ ձևերը (գծապատկեր 3).

- ✓ Դոտացիաներ,
- ✓ Սուբվենցիաներ,
- ✓ Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար հատկացումներ,
- ✓ Բյուջետային փոխառություններ,
- ✓ Բյուջետային վարկեր,
- ✓ Բյուջետային երաշխիքներ:

Գծապարկեր 3. Պետական բյուջեից համայնքային բյուջեներ ուղղվող հարկացումները



Ֆինանսական համահարթեցման դոտացիաներ և այլ դոտացիաներ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և ՏԻԵԽ-ի կարևորագույն դրույթներից մեկը նվիրված է ՏԻՄ-երին սահմանադրությամբ և օրենքներով վերապահված գործառույթների, լիազորությունների և դրանց իրականացման համար համապատասխան ֆինանսական հենքի առկայության կարևորությանը:¹⁹ Սակայն, որպես կանոն, անկախ երկրի քաղաքական և սահմանադրական կառուցվածքից և դրա հարկային եկամուտների ու ծախսային պարտավորությունների բաշխման առանձնահատկություններից, համայնքները գրեթե միշտ չեն կարողանում ամբողջությամբ կատարել իրենց լիազորությունները միայն տեղական բյուջեների միջոցների հաշվին, և անհրաժեշտություն է առաջանում դրանք համալրել այլ մակարդակների կամ կառավարման նույն մակարդակի այլ օղակներից ստացվող ֆինանսական միջոցների հաշվին:

Բնակչության վարչատարածքային անհավասարաչափ տեղաբաշխման, դեմոգրաֆիկ առանձնահատկությունների, զբաղվածության, աշխատուժի որակական կազմի և սոցիալ-տնտեսական այլ բնութագրիչների տարբերությունների պատճառով միևնույն երկրի տարբեր համայնքները կարող են ունենալ ծայրահեղ տարբեր բյուջետային հնարավորություններ, ինչն էլ որոշակիորեն կազդի հանրային բնույթի ծառայությունների մատուցման որակի վրա: Ահա այստեղ է, որ առաջանում է համայնքների ֆինանսական հնարավորությունների համահարթեցման անհրաժեշտությունը: «Համահարթեցնել» նշանակում է՝ բերել համակարգը մեկ այլ

¹⁹ տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդված 8, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա (ՏԻԵԽ), Հոդված 9

համակարգին հնարավորինս մոտ վիճակի, որի դեպքում դրանց միջև առկա բևեռացումը կլինի նվազագույնը:

ՀՀ-ում ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, որպես անհատույց հատկացում, «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի համաձայն, **պետական բյուջեից** հատկացվում են համայնքներին՝ վերջիններիս ներդաշնակ զարգացմանը նպաստելու, տեղում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու, ինչպես նաև ՏԻՄ-երին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման համար:²⁰

Կարևոր է փաստել, որ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները **անհատույց են և ոչ նպատակային**, ինչը նշանակում է, որ համայնքներին չի կարող պարտադրվել տվյալ ֆինանսական միջոցներն ուղղել կոնկրետ ծրագրերի իրականացմանը և ՏԻՄ-երն իրավասու են ինքնուրույն և ազատորեն որոշել դրանց ծախսման ուղղությունները:

Պետական բյուջեից ՀՀ բոլոր համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի (պետական և համայնքային բյուջեներ) փաստացի եկամուտների հանրագումարի **4%-ը**:²¹

Համահարթեցման դոտացիաների առավել արդարացի և նպատակային բաշխման նպատակով «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը սահմանել է յուրաքանչյուր համայնքին հատկացվող գումարի հաշվարկման յուրահատուկ մեխանիզմ: Այսպես, համահարթեցման դոտացիաները բաղկացած են երկու մասից՝ «ա» և «բ», ընդ որում՝

1. «ա» մասով դոտացիաները յուրաքանչյուր համայնքին հատկացվում են հավասարաչափ գումարով (չափը սահմանվում է տվյալ տարվա «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով) և տրվում են այն համայնքներին, որոնց բնակչության թվաքանակը (հաշվառվող տարվան նախորդող տարվա հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվը) **չի գերազանցում 3500-ը**: Ընդ որում՝ համայնքի դոտացիա ստանալը «ա» մասով չի բացառում նույն համայնքի դոտացիա ստանալը նաև «բ» մասով:
2. «բ» մասով դոտացիաների հաշվարկման հիմքում ընկած է համայնքների եկամտային կարողությունը և ծախսային կարիքը, որտեղ՝

²⁰ տե՛ս «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, Հոդված 2

²¹ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 20

- 2.1. **Եկամտային կարողությունը** տվյալ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված հողի հարկի, գույքահարկի, մասհանվող հարկերի, պետական տուրքերի և «ա» մասով հատկացվող դոտացիայի հանրագումարն է: Այսինքն, այն ընդգրկում կերպով ցույց է տալիս այս կամ այն համայնքի բյուջե մուտքագրվող եկամուտների հավաքագրման ընդհանուր մակարդակը:
- 2.2. **Ծախսային կարիքը** տվյալ համայնքի սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ամբողջությունն է: Վերջինիս հաշվարկման համար հիմք են ընդունվում համայնքների բնակչության թվաքանակի ազդեցությունը սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա (մասշտաբի էֆեկտ), տրանսպորտային մատչելիությունը, համայնքի բարձրադիրությունը, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակը և բնակչության տարիքային կառուցվածքը: Սրանք այն հիմնական գործոններն են, որոնք էականորեն ազդում են համայնքի կողմից իրականացվող ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի մեծության վրա, իսկ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը չափելի է, մատչելի և հավաստի:²²

Պետական բյուջեի ծախսերում, բացի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներից, կարող են նախատեսվել համայնքների բյուջեներին հատկացվող **այլ դոտացիաներ**: Վերջիններս համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով որևէ ծախսատեսակի (ծրագրի) իրականացման հետ չկապակցված, անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ են:²³

Սուբվենցիաներ

Պետական բյուջեում առանձին հոդվածներով պլանավորվում և համայնքների բյուջեներին ամեն տարի տրամադրվում են պաշտոնական դրամաշնորհների մեկ այլ տեսակ՝ սուբվենցիաները: Դրանք պետական բյուջեից համայնքների ընթացիկ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման **նպատակային, անհատույց և անվերադարձ** կարգով տրվող դրամական միջոցներ են, որոնք ՏԻՄ-երի կողմից ըստ նպատակի չիրացվելու դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

Նախքան սուբվենցիաների տրամադրումը պետական կառավարման մարմինները (ի դեմս տարածքային կառավարման մարմինների) և ՏԻՄ-երը համատեղ քննարկում են համայնքի հիմնախնդիրները, ճշտում դրանց առաջնահերթություններն ու

²² Համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գումարի հաշվարկման կարգին առավել մանրամասն ծանոթանալու համար տե՛ս «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, Հոդվածներ 6-16

²³ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 20, մաս 4

Ֆինանսավորման անհրաժեշտությունը, որից հետո միայն այդ գումարներն արտացոլվում են պետական բյուջեում: Այսպես, համայնքների ղեկավարները ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաներ ստանալու նպատակով տվյալ տարվա բյուջետային գործընթացն սկսելու ժամանակ սուբվենցիայի ստացման ծրագրային հայտերը ներկայացնում են համապատասխան մարզպետին, իսկ Երևանի քաղաքապետը՝ համապատասխան ոլորտային պետական կառավարման մարմիններ և ՀՀ ՏԿԶՆ: Սուբվենցիայի ծրագրային հայտերը մարզպետարանում քննարկվելուց և ամփոփվելուց հետո ներկայացվում են համապատասխան ոլորտային պետական կառավարման մարմիններ և ՀՀ ՏԿԶՆ՝ քննարկման: Քննարկման արդյունքների հիման վրա դրական եզրակացություն տալու դեպքում պետական կառավարման մարմինները ոլորտի գծով տվյալ տարվա համար նախատեսված բյուջետային հատկացումների ընդհանուր չափաքանակների սահմաններում դրանք ներառում են առաջիկա տարվա իրենց բյուջետային ֆինանսավորման հայտերում և համապատասխան եզրակացության հետ միասին ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ ՏԿԶՆ (Երևան քաղաքի գծով՝ Երևանի քաղաքապետարան):²⁴

Պետությունը համայնքներին սուբվենցիաներ տրամադրում է նաև համաֆինանսավորման կարգով, այսինքն՝ սուբվենցիա տրամադրելիս սահմանվում է, որ ծրագրի իրականացմանը համայնքը նույնպես պետք է ունենա ֆինանսական, նյութական կամ աշխատանքային որոշակի մասնակցություն:

Բացի ՀՀ պետական բյուջեով նախատեսված սուբվենցիաներից, համայնքները կարող են պետական բյուջեից ստանալ նաև **տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներ**: Սուբվենցիայի հայտերը պետք է բխեն համայնքի պարտադիր խնդիրներից, ինչպես նաև համապատասխանեն համայնքների ՀՀԶԾ-ներին և նպաստեն դրանց իրագործմանը:

Սուբվենցիաները համայնքներին տրամադրվում են՝ ելնելով վարչապետի որոշմամբ ստեղծված սուբվենցիայի ծրագրերի գնահատման **միջգերատեսչական հանձնաժողովի** անդամների՝ սուբվենցիոն հայտերի վերաբերյալ դրական եզրակացության հիման վրա: Յուրաքանչյուր սուբվենցիայի հայտի վերաբերյալ վերջնական դրական եզրակացությունը տրվում է հանձնաժողովի անդամների բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդ որում, նիստի ընթացքում կայացվում է դրական եզրակացություն, ելնելով՝

- տարածքների համաչափ զարգացման միտումներից,
- համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման վրա էական ազդեցությունից,
- համայնք-մասնավոր համագործակցության առկայությունից:

²⁴ Առավել մանրամասն տե՛ս «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N1708-Ն, 16.11.2006թ., մաս 1.1

«« պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա տրամադրվում է սուբվենցիայի ծրագրի ընդհանուր արժեքի հետևյալ չափաբաժնով՝ ըստ ծրագրի հետևյալ ոլորտների (աղյուսակ 1)»

Աղյուսակ 1. «« պետական բյուջեից հատկացվող սուբվենցիայի չափաբաժինը՝ կախված բնակավայրի՝ մայրաքաղաքից ունեցած հեռավորությունից»²⁵

Ծրագրի ոլորտ	«« պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիայի չափաբաժինը, %			
	Մայրաքաղաքից մինչև 60 կմ հեռավորություն ունեցող բնակավայր	Մայրաքաղաքից 60 կմ-ից ավելի և մարզկենտրոնից մինչև 30 կմ հեռավորություն ունեցող բնակավայր	Մայրաքաղաքից 100 կմ-ից ավելի հեռավորություն ունեցող բնակավայր	Սահմանամերձ և/կամ բարձր լեռնային բնակավայր
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում/ ասֆալտապատում	45	50	55	60
Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	55	60	65	70
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	55	60	65	70
Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	50	55	60	65
Վերականգնվող էներգետիկա, այդ թվում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	45	50	55	60
Բնակավայրերի գազաֆիկացում	50	55	60	65
Մանկապարտեզների կառուցում/ վերակառուցում/նորոգում	50	55	60	65
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում	30	35	40	45
Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում	45	50	55	60
Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	30	35	40	45
Մեքենասարքավորումների ձեռքբերում	40	45	50	55
Աղբավայրերի բարեկարգում կամ փակում	35	40	45	50

²⁵ «« պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N1708-Ն, 16.11.2006թ., մաս 24

Սուբվենցիաները պետք է ծախսվեն բացառապես սահմանված նպատակներով, իսկ պետական մարմիններն էլ իրավասու են վերահսկել դրանց օգտագործման արդյունավետությունն ու նպատակայնությունը:

Բյուջետային վարկեր և փոխատվություններ

Պետական լիազորված մարմնի համաձայնությամբ համայնքները կարող են ստանալ նաև բյուջետային վարկեր և փոխատվություններ:

Բյուջետային վարկերը վերադարձելիության, ժամկետայնության, արժեքավորման և վճարովիության սկզբունքով **պետական բյուջեից համայնքներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց**, ինչպես նաև՝ **օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին** դրամական տեսքով տրվող միջոցներ են:²⁶ Դրանց բնորոշ են մի քանի սկզբունքներ (ներդիր 1).

Ներդիր 1. Բյուջետային վարկերին բնորոշ սկզբունքները

- **վերադարձելիություն** - տրամադրված գումարը պետք է անպայման հետ վերադարձվի վարկային պայմանագրում սահմանված ժամկետներում,
- **ժամկետայնություն** - վարկը տրամադրվում է ոչ թե ընդհանրապես, այլ որոշակի կոնկրետ ժամկետով,
- **արժեքավորում** - սա իրենից ենթադրում է վարկավորման գործընթացում գրավի ներգրավում,
- **վճարովիություն** - սա նշանակում է, որ վարկառուն փոխառությամբ վերցրած գումարի ժամանակավոր օգտագործման համար վարկատուին պետք է կատարի որոշակի վճարումներ: Այս սկզբունքը իրականացվում է տոկոսի սահմանման ձևով, որը վճարվում է վարկային պայմանագրով նախատեսված չափով և ժամկետներում:

ՏԻՄ-երին վարկերը տրամադրվում են սոցիալական ենթակառուցվածքները զարգացնելու նպատակով վերջիններիս կողմից իրականացվող ծրագրերով նախատեսված կապիտալ ծախսերի գծով ներդրումների ֆինանսավորման համար: Վարկերը տրամադրվում են **ՀՀ պետական բյուջեի ընթացիկ մուտքերի** հաշվին: Եթե դրանց տրամադրման գծով հատկացումները կանխատեսված չեն ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեով, ապա վարկերը տրամադրվում են ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված **ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի** հաշվին:²⁷

Համայնքի ղեկավարը, համաձայնեցնելով համապատասխան պետական լիազորված մարմնի հետ, ավագանու հաստատմանն է ներկայացնում վարկերի ձևով միջոցների ներգրավման հարցը: Համայնքի ավագանին որոշում է կայացնում վարկերի

²⁶ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 10, մաս 1

²⁷ «ՀՀ պետական բյուջեից վարկերի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N168, 09.03.1998թ., գլուխ 2, մաս 4 և գլուխ 1, մաս 3

և օրենքով սահմանված կարգով այլ միջոցների ներգրավման վերաբերյալ, վերահսկում դրանց օգտագործման ընթացքը:²⁸

Վարկ ստանալու գործընթացը բաղկացած է մի քանի հաջորդական փուլերից: Այն սկսվում է համայնքի ղեկավարի կողմից վարկ ստանալու նպատակով հայտի ներկայացմամբ ՀՀ համապատասխան մարզպետին և ավարտվում համայնքի կողմից վարկային պայմանագիրը կնքելուց հետո ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան տեղական գանձապետական բաժանմունքում համայնքի համար բացված գանձապետական հաշվին վարկային միջոցների մուտքագրմամբ:²⁹

Վարկային պայմանագրերը կնքվում են այն պայմանով, որ յուրաքանչյուր բյուջետային տարում վարկի մարման ծրագրով նախատեսված տարեկան գումարը՝ մայր գումարի և տոկոսավճարների հանրագումարը, չգերազանցի համայնքի բյուջեի համապատասխան տարվա ֆոնդային մասի եկամուտների **20%-ը**: Համայնքը նոր վարկ կարող է վերցնել նախորդ վարկային պարտքն ամբողջությամբ մարելուց հետո: Տվյալ վարկային միջոցները պարտադիր ուղղվում են համայնքային **բյուջեի ֆոնդային մաս**: Վարկային պայմանագրի գրավ կարող են լինեն **միայն** համայնքի բյուջեի եկամուտները և ՀՀ կառավարության երաշխիքները: Համայնքի բյուջեի միջոցների հաշվին վարկեր չեն տրվում:³⁰

Բյուջետային փոխատվությունները վերադարձելիության, արժեքավորման և ժամկետայնության սկզբունքով, **առանց վճարովիության** սկզբունքի պետական բյուջեից և համայնքների բյուջեներից համայնքներին առանձին ծրագրերի կամ ծախսերի ֆինանսավորման նպատակով դրամական տեսքով տրվող միջոցներն են: Համայնքներին բյուջետային փոխատվությունները տրվում են **6 ամսից ոչ ավելի** տևողությամբ և նշված փոխառուների կողմից ենթակա են վերադարձման նույն բյուջետային տարում:³¹

Ի տարբերություն վարկերի՝ փոխատվությունները տրամադրվում են առաջնային ծախսերի ֆինանսավորման համար և ուղղվում են **բյուջեի վարչական մաս**: Բյուջետային փոխատվություններ վերցնելու անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ համայնքի բյուջեում դեռևս չեն հավաքագրվել անհրաժեշտ ծավալի պլանավորված եկամուտներ, սակայն անհրաժեշտություն է առաջացել որոշակի ծախսեր իրականացնելու համար: Տվյալ դեպքում ծախսերն իրականացվում են բյուջետային փոխատվության միջոցներով, իսկ հետագայում, հավաքագրվելիք

²⁸ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Հոդվածներ 18, 38

²⁹ ՏԻՄ-երի կողմից վարկ ստանալու գործընթացի փուլերին և առանձնահատկություններին առավել մանրամասն ծանոթանալու համար տե՛ս «ՀՀ պետական բյուջեից վարկերի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N168, 09.03.1998թ., գլուխներ 2, 6, 7:

³⁰ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 30

³¹ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 10, մաս 2

համապատասխան ծավալի եկամուտների հաշվին, իրականացվում է փոխատվության մարումը:

Համայնքի ղեկավարը, ավագանու որոշմամբ, վարչական բյուջեով նախատեսված ծախսերը ժամանակին կատարելու նպատակով, համապատասխան պետական լիազորված մարմնի համաձայնությամբ, կարող է ստանալ բյուջետային փոխատվություններ (այլ համայնքի բյուջեից փոխատվություն ստանալու համար պահանջվում է նաև փոխատվություն տրամադրող համայնքի ավագանու համաձայնությունը): Համայնքը նոր փոխատվություն կարող է ստանալ նախկինում ստացված փոխատվության գծով պարտքը ամբողջությամբ մարելուց հետո:³²

Պետական բյուջեից և համայնքի բյուջեից փոխատվությունները տրամադրվում են ընթացիկ մուտքերի հաշվին:³³

Համայնքը փոխատվություն տրամադրում է համայնքի ավագանու որոշմամբ՝ համայնքի բյուջեում ծրագրավորված ծախսերի նկատմամբ փաստացի եկամուտների գերազանցման շնորհիվ գոյացած ժամանակավոր ազատ միջոցների չափով: Փոխատվության չափը չի կարող գերազանցել փոխառուի՝ տվյալ տարվա բյուջեով նախատեսված ծախսերի 30%-ը:³⁴

Բյուջետային երաշխիքներ և պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման համար տրվող միջոցներ

Համայնքը կարող է ստանալ բյուջետային երաշխիքներ, երբ պետությունը հանդես է գալիս իբրև միջնորդ-երաշխավոր համայնքի՝ այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում: Ըստ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի՝ բյուջետային երաշխավորագիրը պարտավորություն է, որով երաշխավորվում է բյուջետային երաշխավորագիր ստացող անձի նկատմամբ համայնքի, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև օտարերկրյա պետության, միջազգային կազմակերպության պարտքային պարտավորությունների պատշաճ կատարումը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:³⁵ Սա նշանակում է, որ այն դեպքում, երբ համայնքն ի վիճակի չի լինում կատարել իր պարտականությունները երրորդ կողմի հանդեպ, ապա պետությունն իր վրա է վերցնում դրա իրականացումը պետական բյուջեի միջոցների հաշվին:

³² «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 30, մաս 1

³³ Պետական բյուջեից համայնքներին փոխատվությունների տրամադրման ընթացակարգին ծանոթանալու համար տե՛ս «Պետական բյուջեից ՏԻՄ-երին փոխատվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N164, 09.03.1998թ.

³⁴ «Համայնքի բյուջեից այլ համայնքների բյուջեներին, Երևան քաղաքի բյուջեին և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեին առանձին ծրագրերի կամ ծախսերի ֆինանսավորման նպատակով փոխատվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N2096-Ն, 01.12.2005թ.

³⁵ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 11, մաս 1

Երաշխավորված պարտքային պարտավորությունների չկատարմամբ պայմանավորված գումարները վճարվում են պետական բյուջեով նախատեսված **պահուստային ֆոնդի** միջոցների հաշվին և արտացոլվում առանձին տողով: Տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը:³⁶

Երաշխավորագրերը կարող են տրամադրվել սոցիալական ենթակառուցների զարգացման ծրագրերի շրջանակներում ներդրումներ իրականացնող ՏԻՄ-երի հայտերով՝ որպես նշված ծրագրերի շրջանակներում այլ անձանց նկատմամբ առաջացող պարտավորությունների կատարման ապահովման միջոց:³⁷

Համայնքների բյուջեներից պետության կողմից ՏԻՄ-երին **պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի** ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին: Վերջիններիս տրամադրման համար նախապես պետք է հստակեցվեն լիազորությունների իրականացման չափանիշները, կատարվելիք աշխատանքների ծավալը, ֆինանսավորման մեծությունը, կարգը և պայմանները: Այս միջոցները ևս նպատակային են և անվերադարձելի: Պատվիրակված լիազորությունները (այդ թվում՝ դրանց իրականացման ծախսերի ֆինանսավորումը) իրականացվում են օրենքով կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով:³⁸

³⁶ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, Հոդված 11

³⁷ «ՀՀ պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N380, 18.06.1998թ.

³⁸ Տե՛ս «ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տարածքային բաժինները համայնքների ենթակայությանը հանձնելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N1699-Ն, 18.12.2003թ., «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք

Գրականություն

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
2. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
3. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք
4. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք
5. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք
6. «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք
7. «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N1708-Ն, 16.11.2006թ.
8. «ՀՀ պետական բյուջեից վարկերի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N168, 09.03.1998թ.
9. «Պետական բյուջեից ՏԻՄ-երին փոխատվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N164, 09.03.1998թ.
10. «Համայնքի բյուջեից այլ համայնքների բյուջեներին, Երևան քաղաքի բյուջեին և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեին առանձին ծրագրերի կամ ծախսերի ֆինանսավորման նպատակով փոխատվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 2096-Ն, 01.12.2005թ.
11. «ՀՀ պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N380, 18.06.1998թ.
12. «ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տարածքային բաժինները համայնքների ենթակայությանը հանձնելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N1699-Ն, 18.12.2003թ.
13. «Տեղական ինքնակառավարման համակարգում ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման ձեռնարկ», Միավորված ազգերի Զարգացման ծրագիր, Երևան 2006թ.
14. «Համայնքի ֆինանսական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Վ. Շահբազյանի խմբ., Գորիսի երիտասարդական միություն ՀԿ, Երևան, 2009թ.
15. «Համայնքի բյուջետավարման ուղեցույց», ԱՄՆ ՄԶԳ Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլ, Երևան, 2010թ.
16. «ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ծրագրային բյուջետավորման մեթոդաբանություն», ԳՄՀԸ, ՀՖՄ, Երևան, 2017թ.
17. <https://www.arlis.am/>, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ
18. <http://www.irtek.am/>, Իրավական տեղեկատվական կենտրոն